

ԳՐՈՒՅԵՑԱՐՆԵՐ ԲՈԼԱՐ ՅԵՐԿՐԵՆԵՐԻ, ՄԻԱՅՆ ՀԵՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻՈՒԹՅԱՆ

ԿՈՆՍՏԱՏՈՒՑԻԱՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏԱՏՈՒՑԻԱՆԻ ՆԱԽԱԳԻՒԾԸ,  
ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿՈՍՄԻ  
ԿՈՆՍՏԱՏՈՒՑԻԱՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ  
ՅԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱՇ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿՈՍՄԻ ՆԱԽԱԳԻՒԾՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԾԻՈՒԹԵՆՑԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄՈՐԻ  
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՆԵՐԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԿՐՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՅ»  
ՈՒՍՏՈՎ-ԴՈՆ — 1936

342(47)

կ-11

342 (47)

Պրոլետարիատի բոլոր յերկրների, միացե՛ք  
ՀՀ

11 SEP 2011  
01 MAR 2011  
Apr. 6.  
08 FEB 2011

ԽՈՐՀՄԴՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻԱԽԹՅԱՆ

ԿՈՆՍԱՏԻՏՈՒՑԻԱՆ  
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ԿՈՆՍԱՏԻՏՈՒՑԻԱՆ ԿՈՆՍԱՏԻՏՈՒՑԻԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ,  
ՆԵՐԿԱՅԱՎՎԱԾԱԾ ԿՈՆՍԱՏԻՏՈՒՑԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԿՈՆՍԱՏԻՏՈՒՑԻԱՆ ՀԱՆՉԱՆԱԳՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ  
ՅԵՎ ՀԱՎԱՆԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ ԿՈՆՍԱՏԻՏՈՒՑԻԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀԱՆԱԳՈՂՈՎԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԿՈՆՏՐՈՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԳՈՂՈՎԱՆ ՀԱՅԱԳՈՂՈՎԱՐԻ  
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ


ԱԶՈՎ-ՄԵՎԼՈՎՅԱՆ ՅԵՐԿՐՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳԻՒՅՑՈՒՆ «ԳՐՈՂ»  
ԴՐԱՄ 14. - ԴՐԱ - 1936

11 SEP 2013

20623

34.687

ANSWER



1827-53

Ответственный по выпуску *А. Г. Аваков*  
Пом. техред. *Д. М. Джинибалаян*

Уполномоченный № С-5515. Формат 53x78 1/16. Сдано в набор  
5 июля 1936 г. Подписано в печать 9 июля 1936 г. Объем 21/2  
печатных листов. Заказ № 144. Тираж 2000

Типография краевого армянского издательства „ГРО“  
Ростов н-Дону, Ворошиловский пр. № 27

ԽԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄ

# ԻՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Լսելով Կանսիտուցիոն Հանձնաժողովի նախագահ ընկեր ՍՏԱԼԻՆԻ գեկուցումը ԽՍՀՄ-ի Կանսիտուցիայի նախագծի մասին, ԽՍՀ Միության Վենցորդկումի նախագահությունը վորուստ է.

1. Հավանություն տալ ԽՍՀ Միության Կենս գործկոմի Կոնսիսուցիոն Հանձնաժողովի կողմէց ներկայացրած ԽՍՀ Միության Կոնսիսուցիայի հասագօծին:

3. Հրավիրել Խորհուրդների Համախութեան կան Համագումար՝ ԽՍՀ Միության Կոնստիտուցիայի նախագիծը բնարկելու նաև:

3. Խարսխութեանքի Համայնքութեական Համագումարի նրավիրման ժամկետը սահմանել 1936 թվի նոյեմբերի 25-ը:

4. Հրապարակել ԽՍՀ Միության կոնստիտուցիայի նախագիծը՝ համաժողաբարձրական բննարկման համար:

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՎԱԴԻԲ  
ԿՈՄԻՏԵՑԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԿԱԼԻՆԻԿ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐԻՐ  
ԿՈՄԻՏԵՑԻ ՔԱՐՏՈՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ի. ՈՒՆՉԼԻԿԸ

Մոռկվա, Կրեմլ, 1936 թվի հունիսի 11

ԳԼՈՒԽ

## ՀԱՍՏԱԿԱՎԱՆ ԿԱՐՈՒՔՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն ե:

ՀՈԴՎԱԾ 2. ԽՍՀՄ-ի քաղաքական հիմքը կազմում են աշխատավորների պատգամավորների խորհուրդները, վորոնք աճել և ամրացել են կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու ջնորհիվ:

ՀՈԴՎԱԾ 3. ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում ե քաղաքի և գյուղի աշխատավորներին հանձինս աշխատավորների պատգամավորների խորհուրդների:

ՀՈԴՎԱԾ 4. ԽՍՀՄ-ի տնտեսական հիմքը կազմում են տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների և միջոցների սոցիալիստական սեփականությունը; վորոնք հաստատված են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկիդացիայի, արտադրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործման վոչնչացման ջնորհիվ:

ՀՈԴՎԱԾ 5. ԽՍՀՄ-ում սոցիալիստական սեփականությունն ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոռպերատիվ-կոլխոզային սեփականության ձև (առանձին կոլխոզների սեփականություն, կոռպերատիվ միավորությունների սեփականություն):

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկաները, շախաերը, հանքերը, յերկաթուղային, ջրային և օդային տրանսպորտալ, բանկերը, կապի միջոցները, պետության կողմից կազմակերպված գյուղանտեսական խոշոր ձեռնարկությունները (սովխոզները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև քաղաքների և արդյունաբերական կետերի բնակարանային հիմնական ֆոնդը հանդիսանում են պետական սեփականություն, այսինքն համաժողովրդական ունեցվածք:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլխոզների և կոռպերատիվ կազմակերպությունների համարակական ձեռնարկություններն իրենց կենդանի և մեռյալ ինվենտարով, կոլխոզների և կոռպերատիվ կազմակերպությունների կողմից կատարվող արտադրանքը, ինչպես նաև նրանց հասարակական շենքերը կոլխոզների և կոռպերատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունն են կազմում:

Յուրաքանչյուր կոլխոզային ընտանիք իր անձնական ոգտագործման համար ունի վոչ մեծ տնամերձ հողամաս և վորաքան անձնական սեփականություն—սժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակարան, մթերատու անասուն, թոշուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար — գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն,

**ՀՈԴՎԱԾ 8.** Կոլխոզների գբաղեցրած հողերն ամրացվում են նրանց անժամկետ ոգտագործման համար, այսինքն՝ առհավետ:

**ՀՈԴՎԱԾ 9.** Տնտեսության սոցիալիստական սիստեմին զուգընթաց, վորը հանդիսանում ե տնտեսության տիրող ձեր ԽՍՀՄ-ում, որենքով թույլատրվում ե մենատուես գյուղացիների և տնայնագործների մանր մասնավոր տնտեսություն, վորը հիմնված ե անձնական աշխատանքի վրա և բացառում ե ուրիշի աշխատանքի շահագործումը:

**ՀՈԴՎԱԾ 10.** Քաղաքացիների անձնական սեփականությունը՝ նրանց աշխատանքային յեկամուտների ու ինսայողությունների նկատմամբ, բնակելի տան և ոժանդակ տնային տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության առարկաների ու պիտույքների նկատմամբ, ինչպես և անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, պահպանվում ե որենքով:

**ՀՈԴՎԱԾ 11.** ԽՍՀՄ-ի տնտեսական կյանքը վորոշում և նրան ուղղություն ե տալիս պետական ժողովրդական տնտեսական պլանը՝ հոգուտ հանրային հարստության ավելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղքարձացման, ԽՍՀՄ-ի անկախության ամրացման և նրա պաշտպանունակության ուժեղացման:

**ՀՈԴՎԱԾ 12.** ԽՍՀՄ-ում աշխատանքը յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականությունն ե՝ «Ով չի աշխատում, նա չի ուտի» սկզբունքով:

ԽՍՀՄ-ում իրականացվում ե սոցիալիզմի հետեւյալ սկզբունքը՝ «Յուրաքանչյուրից — ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին — ըստ նրա աշխատանքի»:

## ԳԼՈՒԽ 11.

### ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ՀՈԴՎԱԾ 13.** Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունների Միությունը դաշնակից պետություն ե, կազմված հետեւյալ իրավահավասար Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունների կամավոր միավորման հիման վրա՝

Ուսասատանի Խորհրդային ֆեդերատիվ Սոցիալիստական հանրապետության:

Ուկրայինական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Ադրբեյջանյան Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Վրացական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Ուկրեկական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Տաճիկական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Ղազախական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական հանրապետության:

**ՀՈԴՎԱԾ 14.** Խորհրդային Սոցիալիստական հանրապետությունների Միության իրավասու-

թյանը՝ հանձինս նրա իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների, յեն՝

ա) Միության ներկայացուցչություն ուղարկելը միջազգային հարաբերություններում, ուրիշ պետությունների հետ պայմանագրեր կնքելն ու վավերացնելը.

բ) պատերազմի և խաղաղության հարցերը.

գ) ԽՍՀՄ-ի կազմի մեջ նոր հանրապետություններ ընդունելը՝

դ) ԽՍՀՄ կոնստիտուցիայի կատարման հրակողությունը և դաշնակից հանրապետությունների կոնստիտուցիաների համապատասխանության ապահովումը՝ ԽՍՀՄ կոնստիտուցիայի հետ.

ե) միութենական հանրապետությունների միջև սահմանների փոփոխությունների հաստատումը.

զ) ԽՍՀՄ-ի պաշտպանության կազմակերպումը և ԽՍՀՄ-ի բոլոր զինված ուժերի ղեկավարումը.

ը) արտաքին առեւտրի վարումը՝ պետական մենաշնորհի հիմունքով.

թ) պետական անվտանգության պահպանությունը.

յ) ԽՍՀՄ-ի ժողովրդա-տնտեսական պլանների սահմանումը.

ի) ԽՍՀՄ-ի միասնական պետական բյուջեի հաստատումը, ինչպես և այն տուրքերի և յեկամուտների հաստատումը, վորոնք ստացվում են միութենական, հանրապետական և տեղական բյուջեներ կազմելու համար.

լ) բանկերի, արդյունաբերական և գյուղատնտեսական հիմնարկների և ձեռնարկությունների, ինչպես նաև համամիութենական նշանակություն

ունեցող առեւտրական ձեռնարկությունների կառավարումը.

ի) տրանսպորտի և կապի կառավարումը.

ձ) դրամական և վարկային սիստեմի ղեկավարումը.

կ) գույքերի պետական ապահովագրության կազմակերպումը.

հ) փոխառությունների կնքելն ու տալը.

ձ) հողոգտագործման, ինչպես նաև ընդերքի, անտառների և ջրերի ոգտագործման հիմնական սկզբունքների սահմանումը.

ղ) լուսավորության և առողջապահության բնագավառում հիմնական սկզբունքների սահմանումը.

ճ) ժողովրդական տնտեսության հաշվառման միասնական սիստեմի կազմակերպումը.

մ) աշխատանքի որենսդրության հիմունքների սահմանումը.

յ) զատակազմության և զատավարության որենսդրությունը, քոյեյական և քաղաքացիական որենսդրքերը.

ն) միութենական քաղաքացիության վերաբերյալ որենքները, ոտարերկրացիների իրավունքների վերաբերյալ որենքները.

շ) ամենատարածված միութենական ակտերի հրապարակումը:

ՀՈԴԿԱԾ 15. Միութենական հանրապետությունների գերիշխանությունը սահմանափակված է միայն ԽՍՀՄ-ի կոնստիտուցիայի 14-րդ հոդվածում՝ մատնանշված շրջանակներում: Այդ շրջանակներից դուրս յուրաքանչյուր Միութենական հանրապետությունների պետական իշխանությունն իրագործում է ինքնուրույն կերպով: ԽՍՀՄ պահպանում են միութենական հանրապետությունների գերիշխան իրավունքները:

ՀՈՂՎԱԾ 16. Յուրաքանչյուր Միութենական  
հանրապետություն ունի իր կոնստիտուցիան, վորը  
հաշվի յե առնում հանրապետության առանձնա-  
հատկությունները և կառուցված ե ԽՍՀՄ-ի կոնս-  
տիտուցիայի հետ իիովին համապատասխան:

ՀՈՒԿԱԾ 17. Յուրաքանչյուր. Միջըթենական  
հանրայետությանն իրավունք և վերապահվում  
ազատ կերպով դուրս գալու ԽՍՀՄ-ից:

• ՀՈԴՎԱԾ 18. Միութենական հանրապետություն-ների տերիտորիան չի կարող փոփոխվել առանց նրանց համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 19. ԽՄՀՄ-ի որենքները միատեսակ ուժ  
ունեն բոլոր Միութենական հանրապետություն-  
ների տերիտորիայում:

**ՀՐԴՎԱԾ 20.** Միութենական հանրապետության  
որենքի և համամիութենական որենքի. միջև տա-  
րածայնություն լինելու դեպքում, գործում ե հա-  
մամիութենական որենքը:

**ՀՈԴՎԱԾ 21.** ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար սահմանվում ե միասնական միութենական քաղաքացիություն:

**Միութենական հանրապետության ամեն մի քաղաքացի հանդիսանում է ԽՍՀՄ-ի քաղաքացի:**

**ՀՈԴՎԱԾ 22. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդե-  
րատիվ Սոցիալիստական Հանրապետությունը բաղ-  
կացած է՝ Ազգով-Սևծովյան, Հեռավոր-Արևելյան,  
Արևմտյան Միբերի, Կրասնոյարսկի, Հյուսիսային  
Կովկասի, Երկրամասերից, Վորոնեժի, Արևելյան  
Միբերի, Կորկու, Արևմտյան, Խանովալի, Կալինինի,  
Կիրովի, Կույբիշևի, Կուրսկի, Լենինգրադի, Մոսկ-  
վայի, Ռմակի, Ռենբուրգի, Սարատովի, Սվերդլովի,  
Հյուսիսային, Ստալինգրադի, Չելյաբինի, Յարոս-**

զավի մարզերից, Թաթարական, Բաշկիրական, Դաղստանի, Բուրյատ-Մոնղոլական, Կաբարդինո-Բալկարյան, Կալմիկյան, Կարելյան, Կոմի, Դրիմի, Մարիյան, Մորդովյան, Մերձվոլգյան գերմանացիների, Հյուսիսային Ոսեթական, Ուդմուրտյան, Զեչեն-ին-գուշական, Չուվաշյան, Յակուտյան ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններից, Աղիգեյի, Հրեական, Կարաչայյան, Ոյրատյան, Խակասյան, Չեքեսյան ավտոնոմ մարզերից:

ՀՈԴՎԱԾ 23. Ուկրայինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է Վիճակի, Դնեպրոպետրովյան, Դոնեցի, Կիևի, Ռուսայի, Խարկովի, Զերնիգովի և Մոլդավիայի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից:

ՀՈՒՎԱԾ 24. Աղքեքի ջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են Նախիջևանի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզը:

ՀՈՒՎԱԾ 25. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ՝ մտնում են Արխագիտայի ԱԽՄՀ, Աջարիայի ԱԽՄՀ, Հարավային Ռուբիդիայի Ավտոնոմ Մարզու:

ՀՇԴՎԱԾ 26. Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են Կարա-Կալպակիայի ԱնՍ Հանրապետությունը:

ՀՈՒԿԱԾ 27. Տաճիկական Խորհրդային Սոցիալ-  
վաստական Հանրապետության մեջ մտնում ե Լեռ-  
նային Բարգավաշանի Ավտոնոմ մարզը:

ՀՈՂՎԱԾ 28. Պազախական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է

Ակտյուրինի, Ալմա-Աթայի, Արևելյան-Ղազախստանի, Արևմտյան-Ղազախստանի, Կարագանդանդայի, Հարավյան-Ղազախստանի մարզերից։  
ՀՈԴՎԱԾ 29. Հայկական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Թուրքմենսական ԽՍՀ և Կիրգիզական ԽՍՀ իրենց կազմում չունեն ավտոնոմ հանրապետություններ, ինչպես նաև յերկրամասեր և մարզեր։

#### ԳԼՈՒԽ III.

### ԽՈՐՃՐԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՑՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 30. ԽՍՀՄ-ի Գետական իշխանության բարձրագույն մարմինը հանդիսանում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը։

ՀՈԴՎԱԾ 31. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն իրականացնում է, կոնստիտուցիայի 14-րդ հոդվածի համաձայն, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը վերապահված բոլոր իրավունքները, քանի վոր կոնստիտուցիայի ուժով, նրանք չեն մտնում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդին հաշվետու ԽՍՀՄ-ի որդանների — ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության, ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի և ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիտարների իրավասության մեջ։

ՀՈԴՎԱԾ 32. ԽՍՀՄ-ում որենսդրական իշխանությունն իրականացնում է բացառապես ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը։

ՀՈԴՎԱԾ 33. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը բաղկացած է յերկու պալատներից. Միության Խորհրդից և Ազգությունների Խորհրդից։

ՀՈԴՎԱԾ 34. Միության Խորհուրդն ընտրվում է ԽՍՀՄ-ի քաղաքացիների կողմից՝ 300 հազար բնակչի համար մի պատգամավորի նորմայով։

ՀՈԴՎԱԾ 35. Ազգությունների Խորհուրդը կազմվում է այն պատգամավորներից, վորոնց առանձնացնում են միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների և ավտոնոմ մարզերի աշխատավորության պատգամավորների խորհուրդները, յուրաքանչյուր միութենական հանրապետությունից 10-ական պատգամավոր, յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից 5-ական պատգամավոր և յուրաքանչյուր ավտոնոմ մարզից 2-ական պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 36. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն ընտրվում է չորս տարվա ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 37. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատներն ել՝ Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհրդն իրավահավասար են։

ՀՈԴՎԱԾ 38. Միության Խորհրդին և Ազգությունների Խորհրդին հավասար չափով պատկանում է որենսդրական նախաձեռնությունը։

ՀՈԴՎԱԾ 39. Որենքը հաստատված է համարվում, յեթե նա ընդունված է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատների կողմից՝ յուրաքանչյուրի պարզ մեծամասնությամբ։

ՀՈԴՎԱԾ 40. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընդունած որենքները հրապարակվում են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ։

**ՀՈՒՎԱԾ 41.** Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նստաշրջաններն սկսվում ու վերջանում են միաժամանակ:

**ՀՈՒՎԱԾ 42.** Միության Խորհուրդն ընտրում ե Միության Խորհրդի նախագահին և նրա յերկու տեղակալներին:

**ՀՈՒՎԱԾ 43.** Ազգությունների Խորհուրդն ընտրում ե Ազգությունների Խորհրդի նախագահին և նրա յերկու տեղակալներին:

**ՀՈՒՎԱԾ 44.** Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները ղեկավարում են համապատասխան պալատների նիստերը և տնօրինում են նրանց ներքին կարգուկանոնը:

**ՀՈՒՎԱԾ 45.** ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը յերկու պալատների միացյալ նիստերը հերթով վարում են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները:

**ՀՈՒՎԱԾ 46.** ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նըստաշրջանները հրավիրվում են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահության կողմից տարին յերկու անգամ:

« Արտակարգ նստաշրջանները հրավիրվում են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահության կողմից նրա հայեցողությամբ կամ միութենական հանրապետություններից մեկի պահանջով։

**ՀՈՒՎԱԾ 47.** Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միջև տարածայնություններինելու դեպքում հարցը հանձնվում է հավասարության սկզբունքով կազմված համաձայնեցուցիչ հանձնաժողովի վորոշմանը։ Յեթե համաձայնեցուցիչ հանձնաժողովը համբերաշխ վորոշման չի հանգում կամ յեթե նրա վորոշումը չի բավարարության մեկն ու մեկին, ապա հարցը յերկրորդ անգամ քննվում ե պալատներում։ Յերկու պալատների համերաշխ վորոշման բացակայության դեպքում, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունն արձակում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը և նշանակում ե նոր ընտրություններ։

**ՀՈՒՎԱԾ 48.** ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը յերկու պալատների միացյալ նիստում ընտրում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահություն, բաղկացած ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահության նախագահից, նրա չորս տեղակալներից, նախագահության քարտուղարից և նախագահության 31 անդամից։

ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունն իր ամբողջ գործունեյության համար հաշվետու յե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդին։

**ՀՈՒՎԱԾ 49.** ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունը՝

ա) հրավիրում ե ԽՍՀՄ-ի, Գերագույն Խորհրդի նստաշրջանները։

բ) մեկնաբանում ե գործող որենքները՝ հրատարակելով՝ համապատասխան հրամանագրեր։

գ) ԽՍՀՄ-ի կոնստիտուցիայի 47-րդ հոդվածի հիման վրա արձակում ե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդը և նշանակում ե նոր ընտրություններ։

դ) իր նախաձեռնությամբ՝ կամ միութենական հանրապետություններից մեկի պահանջով՝ կազմակերպում ե համաժողովրդական հարցում (ուժի բենդում)։

ե) փոխում ե ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհրդների վորոշումներն

ու կարգադրությունները՝ յեթե նրանք որենքին չեն համապատասխանում.

զ) ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև յեղած ժամանակաշրջանում պաշտոնից աղատում և նշանակում ե ԽՍՀՄ-ի առանձին ժողովրդական կոմիսարներին՝ ԽՍՀՄ ի ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի առաջադրմամբ, հետագայում ներկայացնելով ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի հաստատմանը.

ը) պարզեատրում ե ԽՍՀՄ-ի շքանշաններով. թ) իրականացնում ե ներման իրավունքը.

ժ) նշանակում և փոխում ե ԽՍՀՄ-ի զինված ուժերի բարձր հրամանատարությունը.

ի) ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում հայտարարում ե պատերազմական դրություն՝ ԽՍՀՄ-ի դեմ պատերազմական հարձակում լինելու դեմքում.

լ) հայտարարում ե ընդհանուր և մասնակի դրահավաք.

լի) վավերացնում ե միջազգային պայմանագրերը.

ծ) նշանակում և հետ ե կանչում ԽՍՀՄ-ի լիազոր ներկայացուցիչներին ուստարերկրյա պետություններում.

կ) ընդունում ե ուստարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը.

ՀՈԴՎԱԾ 50. Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդն ընտրում են մանդատային հանձնաժողովներ, վորոնք ստուգում են յուրաքանչյուր պալատի պատգամավորների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի ներկայացմամբ պալատները վորոշում են կամ ճանաչել լիազորությունները կամ բեկանել առանձին պատգամավորների ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 51. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը, յերբ ինքն անհրաժեշտ ե գտնում, վորևե հարցի առթիվ նշանակում ե քննիչ և վերաստուգիչ հանձնաժողովներ։

Բոլոր հիմնարկություններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են կատարելու այդ հանձնաժողովների պահանջները և ներկայացնել նրանց անհրաժեշտ նյութեր և փաստաթղթեր։

ՀՈԴՎԱԾ 52. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորը չի կարող դատական պատասխանատվության յենթարկվել կամ ձերբակալվել առանց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի համաձայնության, իսկ այն ժամանակաշրջանում, յերբ չկա ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջան, — առանց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահության համաձայնության։

ՀՈԴՎԱԾ 53. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորության ժամանակը լրանալիս կամ ժամկետից առաջ արձակվելուց հետո, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունը պահում ե իր լիազորությունները մինչև ԽՍՀՄ-ի նորընտիր Գերագույն Խորհրդի կողմից ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նոր նախագահության կազմվելու։

ՀՈԴՎԱԾ 54. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունների ժամանակը լրանալիս կամ ժամանակից առաջ արձակվելու դեպքում, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նախագահությունը նոր ընտրությունները նշանակում ե վոչ ավել, քան յերկու ամսվա ժամկետում սկսած ԽՍՀՄ-ի Գերագույն Խոր-

հրդի լիազորության ժամանակին հանրապետական գաղաքական գործությունների հակառակությունը առաջանաւ:

ՀՈԴՎԱԾ 55. ԽՍՀՄ.-ի նորբնտիր Գերագույն Խորհրդի հրավիրվում և ԽՍՀՄ.-ի Գերագույն Խորհրդի նախագահի նախագահական կողմից վոչ ուշ, քան ընտրություններից մի ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 56. ԽՍՀՄ.-ի Գերագույն Խորհրդի պարկու պալատների միացյալ նիստում կազմում ե ԽՍՀՄ.-ի կառավարությունը — ԽՍՀՄ.-ի Ժողովրդական կոմիսարների Խորհրդը:

Գ: ՈՒԽ IV.

#### ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 57. Միութենական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը հանդիսանում է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդը:

ՀՈԴՎԱԾ 58. Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդին ընտրվում է հանրապետության քաղաքացիների կողմից՝ 4 տարվա ժամանակով:

Ներկայացուցչության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների կոնստիտուցիաներով:

ՀՈԴՎԱԾ 59. Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի հանդիսանում է հանրապետության միակ որենսդիր մարմինը:

Նաև մասնակիութենական հանրապետության ռերագույն Խորհրդը՝

ա) ընդունում է հանրապետության կոնստիտուցիան և նրա մեջ փոփոխություններ ե մըտցնում՝ ԽՍՀՄ.-ի կոնստիտուցիայի 16-րդ հոդվածի համաձայն:

բ) հաստատում է իր կազմի մեջ գտնվող ավտոնոմիան հանրապետությունների կոնստիտուցիաները և վորոշում է նրանց տերիտորիայի սահմանները:

գ) հաստատում է հանրապետության ժողովրդական տնտեսության պլանը և բյուջեն:

դ) ոգտվում է ամենատիայի և Միութենական հանրապետության դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիներին ներման իրավունքով:

ՀՈԴՎԱԾ 61. Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդին ընտրում է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահություն՝ հետևյալ կազմով՝ Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահության նախագահին և Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահության անդամները:

Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահության լիազորությունները վորոշվում են Միութենական հանրապետության կոնստիտուցիայով:

ՀՈԴՎԱԾ 62. Նիստերը վարելու համար Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդին ընտրում է իր նախագահին և նրա տեղակալներին:

**ՀՈԴՎԱԾ 63.** Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը կազմում և Միութենական հանրապետության կառավարություն—Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը:

ԳԼՈՒԽ V.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**ՀՈԴՎԱԾ 64.** Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհուրդը:

**ՀՈԴՎԱԾ 65.** ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհուրդը պատասխանատու յե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան:

**ՀՈԴՎԱԾ 66.** ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշումներ ու կարգադրություններ ե հրատարակում՝ գործող որենքների հիման վրա և ի կատարում այդ որենքների, և ստուգում ե նրանց կատարումը:

**ՀՈԴՎԱԾ 67.** ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր ե ԽՍՀ Միության ամբողջ տերիորիայում:

**ՀՈԴՎԱԾ 68.** ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը՝

ա) միավորում և ուղղություն ե տալիս ԽՍՀՄ-ի համամիութենական ու միութենահանրապետական ժողովրդական կոմիսարիատների և նրա յենթակա ուրիշ տնտեսական և կուլտուրական հիմնարկների աշխատանքներին.

բ) միջոցներ ե ձեռք առնում ժողովրդական տնտեսության պլանի, պետական բյուջեյի կատարման և վարկային-դրամական սիստեմն ամրացնելու համար.

գ) միջոցներ ե ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու համար.

դ) իրականացնում ե ընդհանուր ղեկավարությունն ուստարերկրյա պետությունների հետ ունեցած հարաբերությունների ասպարիզում.

ե) սահմանում ե իսկական զինվորական ծառայության յենթակա քաղաքացիների յուրաքանչյուր տարբա կազմը, և ղեկավարում ե յերկրի զինվածութերի ընդհանուր զինարարությունը:

**ՀՈԴՎԱԾ 69.** ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կառավարման ու տնտեսության՝ ԽՍՀ Միության իրավասությանը վերապահված բնագավառներում դադարեցնել Միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումների ու կարգադրությունների գործողությունը և փոխել ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների հրամաններն ու հրահանգները:

**ՀՈԴՎԱԾ 70.** ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդը կազմվում ե ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի կողմից, հետեւյալ կազմով.

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների  
Խորհրդի նախագահ,

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների  
Խորհրդի նախագահի տեղականներ,

ԽՍՀ Միության Պետական Պլանային Հանձնա-  
ժողովի նախագահ,

Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի  
նախագահ,

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարներ,  
Մթերումների կոմիտեյի նախագահ,

Արվեստի գործերի կոմիտեյի նախագահ,  
Բարձրագույն դպրոցների գործերի կոմիտեյի  
նախագահ:

ՀՈԴՎԱԾ 71. ԽՍՀ Միության կառավարու-  
թյունը, կամ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարը, վո-  
րոնց ուղղված ե ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատ-  
գամավորի հարցապնդումը, պարտավոր են վոչ ավելի  
քան յերեք որվա ընթացքում տալ բանագոր կամ  
դրավոր պատասխան համապատասխան պալատում։

ՀՈԴՎԱԾ 72. ԽՍՀ Միության ժողովրդական  
կոմիսարները վարում են պետական կառավարման  
այն բնագավառները, վորոնք մտնում են ԽՍՀՄ  
իրավասության մեջ։

ՀՈԴՎԱԾ 73. ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարնե-  
րը, համապատասխան ժողովրդական կոմիսարիատ-  
ների իրավասության սահմաններում, հրատարա-  
կում են՝ հրամաններ՝ գործող որենք-  
ների հիման վրա և ի կատարումն այդ որենքների,  
ինչպես նաև ԽՍՀ Միության ժողովրդական կոմի-  
սարների Խորհրդի վորոշումների ու կարգադրու-  
թյունների հիման վրա և ստուգում են նրանց կա-  
տարումը։

ՀՈԴՎԱԾ 74. ԽՍՀ Միության ժողովրդական  
կոմիսարիատները լինում են կամ համամիութենա-  
կան կամ միութենա-հանրապետական։

ՀՈԴՎԱԾ 75. Համամիութենական ժողովրդա-  
կան կոմիսարիատները վարում են նրանց հանձնա-  
րարած պետական կառավարման ճյուղերը ԽՍՀՄ-ի  
ամբողջ տերիտորիայի վրա, կամ անմիջականորեն  
և կամ թե իրենց կողմից նշանակված մարմինների  
միջոցով։

ՀՈԴՎԱԾ 76. Միութենական ժողովրդական  
կոմիսարիատները վարում են իրենց հանձնարար-  
ված պետական կառավարման ճյուղը միութենա-  
կան հանրապետությունների նույնանուն ժողովրդա-  
կան կոմիսարիատների միջոցով։

ՀՈԴՎԱԾ 77. Համամիութենական ժողովրդական  
կոմիսարիատներին են վերաբերում հետեւյալ ժո-  
ղովրդական կոմիսարիատները։

Պաշտպանության,  
Արտաքին գործերի,  
Արտաքին առևտուրի,  
Ճանապարհների հաղորդակցության  
կապի,  
Զբային տրանսպորտի,  
Ծանր արդյունաբերության։

ՀՈԴՎԱԾ 78. Միութենա-հանրապետական ժո-  
ղովրդական կոմիսարիատներին են վերաբերում  
Մնաղի արդյունաբերության,  
Թեթև արդյունաբերության,  
Անտառային արդյունաբերության,  
Հողագործության,  
Հացահատիկային և անամնապահական սովոր-  
ների,

ֆինանսների,  
Ներքին առևտուրի,  
Ներքին գործերի,  
Աղբարադատության,  
Առողջապահության ժողովրդական կոմիսա-  
րիատները:

Գ.ՈՒԽ VI.

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 79. Միութենական հանրապետության պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 80. Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը պատասխանատու յե Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան:

ՀՈԴՎԱԾ 81. Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը հրապարակում և վորոշումներ և կարգադրություններ ԽՍՀՄ և Միութենական Հանրապետության գործող որենքների, ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ որենքների և ստուգում և նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 82. Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդն իրավունք

ունի դադարեցնել ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները և փոխել յերկրամասերի, մարզերի և ավտոնոմ մարզերի գործադիր կոմիտեների, աշխատավորության պատգամավորների խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 83. Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կազմվում է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից, հետևյալ կազմով.

Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ,

Նախագահի տեղակալները,

Պետական Պահապահին Հանձնաժողովի նախագահ,

Ժողովրդական կոմիսարներ՝

Սննդի արդյունաբերության,

Թեթև արդյունաբերության,

Անտառային արդյունաբերության,

Հողագործության,

Հացահատիկային և անասնապահական սովորությունների,

Ֆինանսների,

Ներքին առևտուրի,

Ներքին գործերի,

Աղբարադատության,

Առողջապահության,

Լուսավորության,

Տեղական արդյունաբերության,

Կոմունալ տնտեսության,

Սոցիալական ապահովության,

**Մթերումների կոմիտեյի լիազոր,**  
**Արքիստի գործերի Վարչության պետ,**  
**Համամիութենական ժողովրդական կոմիսա-**  
**րիատների լիազորներ:**

**ՀՈԴՎԱԾ 84.** Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարները վարում են Միութենական հանրապետության իրավասությանը վերաբերող պետական կառավարման ճյուղերը:

**ՀՈԴՎԱԾ 85.** Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարները համապատասխան ժողովրդական կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ ԽՍՀ Միության և Միութենական հանրապետության որենքների հիման վրա և ի կատարումն այդ օրենքների, ԽՍՀ Միության ու Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների, ԽԾՀ Միության և Միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն նրանց:

**ՀՈԴՎԱԾ 86.** Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարիատները լինում են միութենահանրապետական կամ հանրապետական:

**ՀՈԴՎԱԾ 87.** Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարիատները վարում են իրենց հանձնարարած պետական կառավարման ճյուղը, յենթարկվելով ինչպես Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդին, այնպես և ԽՍՀ Միության համապատասխան միութենական հանրապետական ժողովրդական կոմիսարիատին:

**ՀՈԴՎԱԾ 88.** Հանրապետական ժողովրդական կոմիսարիատները վարում են իրենց հանձնարարած պետական կառավարման ճյուղը, անմիջապես յենթարկվելով Միութենական հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդին:

ԳԼՈՒԽ VII.

**ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՃՐԴՅԱՆ ՍՊԾԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

**ՀՈԴՎԱԾ 89.** Ավտոնոմ Հանրապետության պետական իշխանության բարձրագույն որգանը հանդիսանում է ԱԽՍ Հանրապետության Գերագույն Խորհուրդը:

**ՀՈԴՎԱԾ 90.** Ավտոնոմ Հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրվում է հանրապետության քաղաքացիների կողմից չորս տարի ժամանակով՝ Ավտոնոմ Հանրապետության կոնստիտուցիայով սահմանված ներկայուցուցչության նորմայով:

**ՀՈԴՎԱԾ 91.** Ավտոնոմ Հանրապետության Գերագույն Խորհուրդը հանդիսանում է ԱԽՍ Հանրապետության միակ օրենսդիր մարմինը:

**ՀՈԴՎԱԾ 92.** Յուրաքանչյուր Ավտոնոմ հանրապետություն ունի իր կոնստիտուցիան, վորք հաշվի յե առնում Ավտոնոմ հանրապետության առանձնահատկությունները և կառուցված ե միութենական հանրապետության կոնստիտուցիային լիովին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 93.** Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհուրդն իր հանրապետության կոնստիտուցիայի համաձայն ընտրում ե Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահություն և կազմում ե Ավտոնոմ հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը:

ԳԼՈՒԽ VIII.

### ԹԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**ՀՈԴՎԱԾ 94.** Ցերկրամասերում, ինքնավար մարդկարում, շրջաններում, ույոններում, քաղաքներում, գյուղերում (ստանիցաներում, գյուղերում, խուտորներում, զշլաղներում, առուներում) պետական իշխանության մարմինները հանդիսանում են աշխատավորների պատգամավորների խորհուրդները:

**ՀՈԴՎԱԾ 95.** Աշխատավորների յերկրային, մարդարային, ինքնավար-մարդարային, շրջանային, ույոնական, քաղաքային, գյուղական (ստանիցաներ, գյուղեր, խուտորներ, զշլաղներ, առուներ) պատգամավորների խորհուրդներն ընտրվում են համապատասխան կարգով—յերկրամասի, մարզի, ինքնավար մարզի, շրջանի, ույոնի, քաղաքի, գյուղի աշխատավորների կողմից յերկու տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 96.** Աշխատավորների պատգամավորների խորհուրդների նորհուրդներու ներկայացուցչության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների կոնստիտուցիաների:

**ՀՈԴՎԱԾ 97.** Աշխատավորների պատգամավորների խորհուրդները ղեկավարում են իրենց յեն-

թակա կառավարման մարմինների գործունեյությունը, ապահովում են պետական կարգ ու կանոնի պահպանումը, որենքների և քաղաքացիների իրավունքների պահպանումը, իրականացնում են տնտեսական և կուլտուրական տեղական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն:

**ՀՈԴՎԱԾ 98.** Աշխատավորների պատգամավորների խորհուրդներն ընդունում են վորոշումներ և տալիս են կարգադրություններ այն իրավունքների սահմաններում, վորոնք թույլատրվում են ԽՍՀՄ և Միութենական հանրապետության որենքներով:

**ՀՈԴՎԱԾ 99.** Ցերկրային, մարզային, ավտոնոմ մարդկերի, շրջանային, ույոնական և քաղաքային աշխատավորների պատգամավորների խորհուրդների գործադիր և կարգադրիչ մարմինները հանդիսանում են նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեները, վորի կազմի մեջ մտնում են՝ նախագահը, նրա տեղականները և անդամները:

**ՀՈԴՎԱԾ 100.** Փոքր քնակավայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական խորհուրդների գործադիր և կարգադրիչ մարմինները հանդիսանում են միութենական հանրապետությունների կոնստիտուցիաների համաձայն աշխատավորների կողմից ընտրված նախագահը և նրա տեղակալները:

**ՀՈԴՎԱԾ 101.** Աշխատավորների պատգամավորների խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվեառ յեն ինչպես աշխատավորների պատգամավորների այն խորհրդի առաջ, վորն ընտրել ե նրանց, այնպես և աշխատավորների պատգամավորների վերակաս խորհրդի գործադիր մարմինի առաջ:

## ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

**ՀՈԴՎԱԾ 102.** Արդարադատությունը ԽՍՀՄ-ում իրականացվում է ԽՍՀ Միության Գերագույն Դատարանի, միութենական հանրապետությունների գերագույն դատարանների, յերկրային ու մարզային դատարանների, ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի դատարանների, ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող՝ ԽՍՀՄ-ի հատուկ դատարանների և ժողովրդական դատարանների միջոցով:

**ՀՈԴՎԱԾ 103.** Բոլոր դատարաններում գործերի քննարկումն իրագործվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի որենքով հատուկ նախատեսված դեպքերից:

**ՀՈԴՎԱԾ 104.** ԽՍՀ Միության Գերագույն Դատարանը հանդիսանում է բարձրագույն դատական մարմին. ԽՍՀ Միության Գերագույն Դատարանի վրա պարտավորություն է դրվում հսկել ԽՍՀՄ-ի և միութենական հանրապետությունների բոլոր դատական մարմինների գործունեյությունը:

**ՀՈԴՎԱԾ 105.** ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանը և ԽՍՀՄ-ի հատուկ դատարաններն ընտրվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից 5 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 106.** Միութենական հանրապետությունների Գերագույն դատարաններն ընտրվում են միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից 5 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 107.** Ավտոնոմ հանրապետությունների Գերագույն դատարաններն ընտրվում են ավտո-

նոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից 5 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 108.** Յերկրային և մարզային դատարանները, ինքնավար մարզերի դատարաններն ընտրվում են աշխատավորների պատգամավորների, յերկրային կամ մարզային խորհուրդների կողմից 5 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 109.** Ժողովրդական դատարաններն ընտրվում են ռայոնի աշխատավորների կողմից, ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ — 3 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 110.** Դատավարությունը տարվում է դաշնակից կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտոնոմ մարզի լեզվով, ապահովելով, վոր այդ լեզուն չտիրապետող անձնավորությունները թարգմանչի միջոցով լիովին ծանոթանան գործի նյութերին, նաև իրավունք ունենան դատարանում մայրենի լեզվով յելույթ ունենալ:

**ՀՈԴՎԱԾ 111.** Գործերի քննարկումը ԽՍՀՄ-ի բոլոր դատարաններում դրնբաց ե, յեթե վոր որենքով չի նախատեսված բացառություններ, ապահովելով մեղադրյալի համար պաշտպանվելու իրավունքը:

**ՀՈԴՎԱԾ 112.** Դատավորներն անկախ են և հպատակում են միայն որենքին:

**ՀՈԴՎԱԾ 113.** Բարձրագույն վերահսկողություն՝ բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց գերատեսչության տակ գտնվող հիմնարկների, առանձին պաշտոնական անձանց, ինչպես նաև ԽՍՀՄ-ի քաղաքացիների կողմից որենքները ճշգրիտ կերպով կատարելու նկատմամբ, դրվում ե ԽՍՀ Միության Դատախազի վրա:

**ՀՈԴՎԱԾ 114.** ԽՍՀՄ-ի Դատախազը նշանակ վում ե ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից յոթ տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 115.** Հանրապետական, յերկրային, մարզային դատախազները, ինչպես նաև ավտոնոմ հանրապետությունների և ավտոնոմ մարզերի դատախազները նշանակվում են ԽՍՀՄ-ի Դատախազի կողմից 5 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 116.** Ռայոնական դատախազները նշանակվում են միութենական հանրապետությունների դատախազների կողմից ԽՍՀՄ-ի Դատախազի հաստատությամբ 5 տարի ժամանակով:

**ՀՈԴՎԱԾ 117.** Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաները (գործերը) կատարում են անկախ վորևե տեղական մարմից, յենթարկվելով միայն ԽՍՀՄ-ի Դատախազին:

## ԳԼՈՒԽ:

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՀՈԴՎԱԾ 118.** ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, յերաշխափորված աշխատանք ստանալու իրավունք, ըստ վորում նրանց աշխատանքը պետք ե վարձատրվի նրա քանակի ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպությամբ, խորհրդային համարական ուժությամբ, աշխատավորների ուղարձում համար կուրորտների լայն ցանցը տրամադրելով:

Ճգնաժամերի բացակայությամբ և գործազրկության վերացմամբ:

**ՀՈԴՎԱԾ 119.** ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք: Հանգստի իրավունքն ապահովվում ե աշխատանքի որը բանվորների ճնշող մեծամասնության համար մինչև յոթ ժամվակրների և ծառայողների համար տարեկան արձակուրդներ սահմանելով, աշխատավարձը պահպանելով՝ հանդերձ, աշխատավորներին սպասարկելու համար՝ տրամադրելով սանսատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանցը:

**ՀՈԴՎԱԾ 120.** ԽՍՀՄ-ի քաղաքացիները ծերության ժամանակ, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում ունեն նյութական ապահովության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է պետության հաշվին կատարվող բանվորների և ծառայողների սոցիալական ապահովության լայն զարգացմամբ, բժշկական ծրի ոգնությամբ, աշխատավորների ուղարձում համար կուրորտների լայն ցանցը տրամադրելով:

**ՀՈԴՎԱԾ 121.** ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք: Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր, պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ, ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն գվարոցում սովորողների ճնշող մեծամասնությանը պետական թոշակների հատկացման սիստեմով, գվարոցներում մայրենի լեզվով սովորեցնելով, գործարաններում, սովորուներում, մեքեն տրամադրային կայաններում և կոլխոզներում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական և ագրոտեխնիկական

ուսուցում կազմակերպելով:

ՀՈԴՎԱԾ 122. ԽՍՀՄ-ում կնոջը տրվում են տղամարդու հետ համասար իրավունքներ տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում:

Կանանց այդ իրավունքների իրագործման հնարավորությունն ապահովում ե նրանով՝ վոր, տղամարդու հետ համահավասար, կնոջը վերապահնվում ե աշխատանքի, աշխատավարձի, հանգստի, սոցիալական ապահովության և կրթության իրավունք, ապահովում ե մոր և մանկան շահերի պետական պաշտպանությամբ, հղիության գեպքում կնոջն արձակուրդ տրամադրելով՝ աշխատավարձը պահպանելով հանդերձ, ծննդատների, մանկամասությների և մանկապարտեզների լայն ցանցով:

ՀՈԴՎԱԾ 123. ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ նրանց ազգությունից և ցեղից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում հանդիսանում ե անխախտ որենք:

Քաղաքացիների իրավունքների վորեւ ուղղակի կամ կողմնակի սահմանափակում, կամ ընդհակառակը, քաղաքացիների ցեղային կամ ազգային պատկանելությունից կախում ունեցող ուղղակի պատկանելություններ սահմանելը, կամ կողմնակի առավելություններ սահմանելը, ինչպես և ցեղային կամ ազգային բացառիկության, կամ առաջարկության ու արհամարհանքի մասին յեղածամեն մի քարոզը պատմվում ե որենքով:

ՀՈԴՎԱԾ 124. Նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների խղճի ազատությունը, ԽՍՀՄ-ում յեկեղեցին բաժանված ե պետությունից և դպրո-

ցը՝ յեկեղեցուց։ Բոլոր քաղաքացիներն ազատ են կրոնական ծեսերում և ազատ են հակալրունական պրոպագանդում։

ՀՈԴՎԱԾ 125. Աշխատավորների շահերի համաձայն և սոցիալիստական իրավակարգի ամրացման նպատակով, ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար յերաշխատավորվում ե.

- ա) խոսքի ազատություն,
- բ) մամուլի ազատություն,
- գ) ժողովների ու միտինգների ազատություն,
- դ) փողոցային յերթերի և ցույցերի ազատություն։

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովում են աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և նյութական այլ պայմաններ, վորոնքաներաժեշտ են նրանց իրականացման համար։

ՀՈԴՎԱԾ 126. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպչական ինքնազործունեյության և քաղաքական ակտիվության զարգացման նպատակով ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար ապահովում է հասարակական կազմակերպությունների մեջ համախմբվելու իրավունքը—արհեստական միություններ, կոռպերատիվ միավորներ, յերիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական և գիտական ընկերություններ, իսկ բանվոր դասակարգի շարքերից և աշխատավորների այլ շերտերից ամենաակտիվ ե գիտական քաղաքացիները համախմբվում են ԽՍՀՄ-ի կոմունիստական կու-

աակցության մեջ,- վորը հանդիսանում ե աշխատա-  
վորների առաջավոր ջոկատը՝ սոցիալիստական կար-  
գերն ամրացնելու և զարգացնելու համար նրանց  
մղած պայքարում և իրենից ներկայացնում ե աշ-  
խատավորների բոլոր՝ թե հասարակական և թե պե-  
տական կազմակերպությունների ղեկավար կորիգը:

ՀՈԴՎԱԾ 127. ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար  
ապահովում ե անձի անձեռնմխելիություն: Վոչ-  
վոք չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատա-  
րանի փորոշմամբ կամ դատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 128. Քաղաքացիների բնակարանի ան-  
ձեռնմխելիությունն ու նամակագրության գաղտ-  
նիքը պահպանվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 129. ԽՍՀՄ-ն ապատանելու իրա-  
վունք ե վերապահում ոտարերկրյա քաղաքացինե-  
րին, վորոնք հալածվում են աշխատավորների շահերի  
պաշտպանության համար կամ դիտական գործու-  
նեյության կամ թե ազգային-ազատագրական պայ-  
քարի համար:

ՀՈԴՎԱԾ 130. ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղա-  
քացի պարտավոր ե պահպանել Խորհրդային Սո-  
ցիալիստական Հանրապետությունների Միաթյան  
Կոնստիտուցիան, կատարել որենքները, պահպանել  
աշխատանքի կարգապահությունը, ազնվորեն վե-  
րաբերվել հասարակական պարտականությանը,  
հարգել սոցիալիստական համայնակեցության կա-  
նոնները:

ՀՈԴՎԱԾ 131. ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղա-  
քացի պարտավոր ե պահպանել և ամրացնել հա-  
սարակական, սոցիալիստական սեփականությունը,  
վորպես խորհրդային կարգերի սրբազն և անձեռն-  
մխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու

հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավոր-  
ների ունենալիք ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Այն անձնավորությունները, վորոնք վոտնձգու-  
թյուն կանեն հասարակական, սոցիալիստական սե-  
փականության նկատմամբ, հանդիսանում են ժո-  
ղովրդի թշնամիներ:

ՀՈԴՎԱԾ 132. Ընդհանուր զինվորական պար-  
տականությունը հանդիսանում ե որենք:

Զինվորական ծառայությունը Բանվորա Գյու-  
ղացիական Կարմիր Բանակում, ԽՍՀՄ-ի քաղաքա-  
ցիների պատվավոր պարտականությունն եւ:

ՀՈԴՎԱԾ 133. Հայրենիքի պաշտպանությունը  
ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պար-  
տականությունն եւ: Հայրենիքի դավաճանությունը,  
յերդման խախտումը, թշնամու կողմն անցնելը, պե-  
տության ուղղմական հզորության մնաս հասցնելը,  
ոտարերկրյա պետությունների ոգտին լրտեսություն-  
կատարելը պատժվում են որենքի ամենայն խստու-  
թյամբ, վորպես ամենածանր վոճրագործություն:

## ԳԼՈՒԽ XI.

### ԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 134. Պատգամավորների ընտրություն-  
ներն աշխատավորների պատգամավորների բոլոր  
խորհուրդների մեջ՝ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդ-  
միութենական հանրապետությունների Գերագույն-  
Խորհուրդներ, աշխատավորների պատգամավորների  
յերկրային և մարզային խորհուրդներ, ավտոնոմ հան-  
րապետությունների Գերագույն Խորհուրդներ, ավ-  
տոնոմ մարզերի աշխատավորների պատգամավոր

ների խորհուրդներ, շրջանային, ռայոնական, քաղաքային և գյուղական (ատանիցային, խուտորային, դղղաղային, առւլային) աշխատավորների պատգամավորների խորհուրդներ, —ընտրողների կողմից կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեյարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 135. Պատգամավորների ընտրություններն ընդհանուր են — ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրանում ե ընտրությունների տարում, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելուն՝ բացի խելագարներից և այն անձնավորություններից, վորոնք դատապարտված են դատարանով, զրկվելով ընտրական իրավունքներից:

ՀՈԴՎԱԾ 136. Պատգամավորների ընտրությունները հավասար են — յուրաքանչյուր քաղաքացի ունի իրավունք ընտրելու և ընտրվելու, անկախ ցեղային և ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզությունից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեյությունից:

ՀՈԴՎԱԾ 137. Կանայք տղամարդկանց հետ համահավասար իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու:

ՀՈԴՎԱԾ 138. Կարմիր բանակի շարքերում գտնված քաղաքացիները բոլոր քաղաքացիների հետ համահավասար իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու:

ՀՈԴՎԱԾ 139. Պատգամավորների ընտրություններն ուղղակի յեն — աշխատավորների պատգամավորների բոլոր խորհուրդների ընտրությունները,

ակսած աշխատավորների պատգամավորների գյոււղական և քաղաքային խորհրդից, մինչև ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը, բաղաքացիները կատարում են ամփոփակելու ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 140. Պատգամավորների ընտրության ժամանակ քվեյարկությունը կատարվում ե գաղտնի:

ՀՈԴՎԱԾ 141. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական շրջանների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպություններին և ընկերություններին՝ կոմունիստական կուսակցական կազմակերպություններին, արհեստական միություններին, կոոպերատիվներին, յերիտասարդության կազմակերպություններին, կուլտուրական ընկերություններին:

ՀՈԴՎԱԾ 142. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր և հաշիվ տալ ընտրողների առաջիր աշխատանքի մասին և աշխատավորների պատգամավորների խորհրդի աշխատանքի մասին և ընտրականների մեծամասնության վորոշմամբ կարող ե ամեն ժամանակ հետ կանչիւ որենքով ուահմանվուծ կարգով:

## ԳԼՈՒԽ XII.

### ԶԻՆԱՇԱՆԵ, ԴՐՈՇԵ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 143. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական զինանիշը բաղկացած է մուրճից ու մանգաղից՝ յերկրագնդի վրա, վորը պատկերված ե արեգակի ճառագայթների միջն շրջանակած հասկերով, միութե-

Նական հանրապետությունների լեզուներով գրված  
մակաղբությամբ. «Պրոլետարներ բոլոր յերկրների,  
միացեք»։ Զինանշանի վերեվում կա հնգածայր աստղ.

ՀՈԴՎԱԾ 144. Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետությունների Միության պետական դրու-  
յը բարդացած ե կարմիր քաթանից, վորի վերեվի՛  
անկյունում՝ ձողիկի մոտ նկարված ե մուրճ և ման-  
գաղ, նրանց վերեվում հնգածայր աստղով, շըր-  
ջանակված վոսկե յերիզով։ Լայնությունը՝ յերկա-  
րության համեմատությամբ 1 : 2.

ՀՈԴՎԱԾ 145. Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետությունների Միության մայրաքաղաքն  
և Մոսկվա քաղաքը։

ԳԼՈՒԽ XIII.

### ԿՈՆՍԻՏՈՒՑԻԱՅԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 146. ԽՍՀՄ-ի կոնստիտուցիայի փո-  
փոխումը կատարվում է միայն ԽՍՀՄ-ի Դերագույն  
Խորհրդի վորոշմամբ, ընդունված նրա յուրաքան-  
չյուր պալատում վոչ պակաս, քան ձայների յերկու  
յերբորդի մեծամասնությամբ։



ՀՀ Ազգային գրադարան



NL0206338

34687

ԳԻՒԸ 15 ԿՊ. Հ  
Цена 15 կոռ.

8/1936

На армянском языке

**ПРОЕКТ КОНСТИТУЦИИ**  
(ОСНОВНОЙ ЗАКОН)  
**СОЮЗА ССР**

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕ  
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „  
Ростов н-Д Ворошиловский

Պ. Ր. Ս. Պ. Ա. Ե. Ս.  
Ուստուլ-Դոն, Մոսկվակայշ փող. № 55  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)

342(47)

Խ-11